ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
**ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ**

17.07.25 № ԱԳ/06.3/23529-25
Ձեր N ____________________

«ՊՐԻՄԱ ԼԱԲ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ ԳԱՅԱՆԵ ԳԱԲՐԻԵԼՅԱՆԻՆ
ՀՎՀՀ 08256775
Հասցե՝ ք. Երևան, Հր. Ներսիսյան 6շ, 4 բն
Հեռ. +374 95 54 30 78
Էլ. հասցեն՝ pprimalab@gmail.com

Ծանուցում
Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

Հարգելի տիկին Գաբրիելյան,

Առողջապահության նախարարության և «Պրիմա Լաբ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև 13.12.2024թ. կնքվել է «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2024/84-2» պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ 51 849 000 (հիսունմեկ միլիոն ութ հարյուր քառասունինը հազար) ՀՀ դրամ ընդհանուր արժեքով:

Պայմանագրի 2.1.2 կետով սահմանված է, որ «եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝ չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը», ինչպես նաև Պայմանագրի 2.1.7 կետով՝ գնորդը իրավունք ունի «Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը: Պայմանագրի 2.1.7.1 կետի «ա» պարբերությամբ

սահմանված է, որ մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում:

Գնման գործընթացի պատասխանատու ստորաբաժանման (մասնագիտական խմբի) 13.06.2025թ. գրությամբ (կցվում է) տեղեկացվել է, որ 12.02.2025թ մասնագիտական խմբի կողմից ներկայացվել է բացասական եզրակացության (կցվում է), համաձայն որի 2-րդ չափաբաժնով մատակարարված ապրանքը չի համապատասխանում պայմանագրով սահմանված պահանջներին: «Պրիմա Լաբ» ՍՊԸ-ի ներկայացուցիչների հետ կայացած քննարկումների արդյունքում ապրանքը չի փոխարինվել պայմանագրի պահանջներին համապատասխանող սարքերով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը: Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերությունը խախտել է պայմանագրով ստանձնած պարտավորությունները, և հիմք ընդունելով Առողջապահության նախարարության ««Յոլյան» արյունաբանության և ուռուցքաբանության կենտրոն» ՓԲԸ-ի կողմից գրությամբ ներկայացված պատասխանատու ստորաբաժանման առաջարկը Պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, Առողջապահության նախարարությունը՝ ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի հրաժարվում է 13.12.2024թ. կնքված «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2024/84-2» պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագրից 2-րդ չափաբաժնով՝ համարելով այն լուծված:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընքացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և

(կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարները:

Հաշվի առնելով վերոգրյալը, տեղեկացնում եմ՝ Պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում պայմանագրի կատարման ապահովման գումարը կազմում է 8 000 000 (ութ միլիոն) ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական **900008000664** հաշվեհամարին և որակավորման ապահովման գումարը կազմում է 12 000 000 (տասներկու միլիոն) ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական **900008000664** հաշվեհամարին:

Միաժամանակ տեղեկացնում եմ, եթե մինչև 2025 թվականի հուլիսի 25-ը ներառյալ Ձեր կողմից վճարվի վերը նշված պայմանագրի և որակավորման ապահովման գումարները, ապա Ընկերությունը չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Նշված բոլոր գումարները անհրաժեշտ է վճարել Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված վերը նշված գանձապետական հաշիվներին և վճարման հանձնարարականների բնօրինակները մինչև 2025 թվականի հուլիսի 25-ը ներառյալ ներկայացնել Առողջապահության նախարարության ֆինանսատնտեսագիտական վարչության գնումների համակարգման բաժին (209 սենյակ):

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ՎԱՐԴԱՆՈՒՇ ԳՐԻԳՈՐՅԱՆ

7/17/2025

X

ՌՈՒԲԵՆԻ ՎԱՐԴԱՆՈՒՇ

Signed by: GRIGORYAN VARDANUSH 6802780100

Կատարող՝ Արմինե Գալուստյան
ՀՀ ԱՆ ֆինանսատնտեսագիտական վարչություն
հեռ. 060-80-80-03/1702